



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍԻ**

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2/3

«14» ապրիլի 2022 թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍԻ**

ՆԻՍԸ ԱՐԶԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը

ՆԻՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 12 (տասներկու) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Հովսեփյան Արգամ Ռադյայի
11. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
12. Զեյնալյան Մասիս Արամայիսի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 3 (երեք) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Վահե Առաքելյանը և Ասպետ Գալստյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 12 (տասներկու) անդամները:**

ՆԻՍԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունիկ Պողոսյանը, Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 64-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին,
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու տարեկան մեկնարկային վարձավճարներ սահմանելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով հողամասեր օտարելու մասին,
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով հողամաս օտարելու մասին,
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին,
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ – 12

դեմ – 1

ձեռնպահ – 2

Դեմ է քվեարկել Մասիս Զեյնալյանը, Ձեռնպահ են քվեարկել Արզամ Հովսեփյանը և Հայրապետ Հայրապետյանը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Ղարազյոզյան)